



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



150

1999

Կ Ր Թ Ա Ր Ա Ն
ԸՆԵՍՐԵԼԵԿԵՆ ԲԵՆԻՑ

Գ Ա Ս Դ .

ԱՄԱՆ ԱՆՈՒԽԱՀՈՑՈՒԹԵԱՆ

Ի

Մ . Վ . Ա Ր Թ Ա Գ Ե Տ Ե Տ Ա Ն Ե Տ
Զ Ա Խ Ա Յ Ե Լ Ա Կ Ա Ն Ո Ւ Խ Ե Տ Ե Տ Ա Ն Ե Տ

Հ Ր Ա Մ Ա Ն Ա Կ
Պ Ա Տ Ի Ա Ր Ք Ի Մ Բ Ո Յ Ե Ր Ո Ւ Խ Ա Ր Ա Կ Ե Մ Ի
Տ . Ե Ս Ա Յ Ե Ա Յ
Մ Բ Բ Ո Ջ Ա Ն Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Վ Ո Մ Ի



Յ Ե Ր Ո Ւ Խ Ա Ր Ա Կ Ե Մ
Ի Տ Պ Ա Ր Ո Ն Ի Մ Բ Ո Յ Ե Ր Ո Ւ Խ Ա Ր Ա Կ Ե Մ

ԿՐԹԱԲԱՆ

ԵՒՏՍՐԵՆԵԿԵՆ ԲԵՆՔ

ԴԱՍ Դ.

ԱՄԱՆ ԱՆՈՒՇԱՀՈՑՈՒԹԵԱՆ

“Եւ մինչէր ՚ի թեթանիայ ՚ի տան
Սիմոնինի բորոտի բաղմետալ, եկն կին
մի որ ունէր շիշ խւզոց նարդեան աղ-
նուի մեծագնոյ, և բեկեալ զիշն՝ ե-
հեղ ՚ի վերայ գլխոց նորա : Եւ աշա-
կերտքն զարէին և ասէին, Ընդէր եւ
զեւ կորուստ խւզոցդ այդորիկ : Մարթ-
էր զայդ խւղ վաճառել աւելի քան եւ-
րեք հարիւր գահեկանի, և տալ աղ-
քատաց : և զայրանային նմա յոյժ :
Եւ Յիսուս ասէ ցնոսա . Թոյլ տուք
դմա՝ զի՞ աշխատ առնէք, զի գործ մի
բարի գործեաց գա յիս : Յամենայի
ժամ զաղքատ ընդ ձեղ ունիք, եւ

91937-60

28 1440

յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս . այլ զիս ոչ յամենայն ժամը ընդ ձեզ ունիք : Դա զօր ուներդ՝ արար . յառաջագոյն խնկեաց զմարմին իմ ՚ի նշան պատահաց : Ամէն առեմ ձեզ . Ուր և քարոզեսի Աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ , և զօր արար դա՝ խօսեսի վասն յիշատակի դորին » : Սար . ԺԴ . 3-9 :

ԱԿԵՏԱՐԱՆՆ շատ կը տարբերի միւս պատմութիւններէն : Ինչ որ միւս պատմութիւններն մեծ փութով կը հաւաքեն , Աւետարանն կը թողուզայն , անտես առնելով . իսկ ինչ որ միւս պատմութիւններն կ'արհամարհեն և կը թողլուն , Աւետարանն կ'ամփոփէ զայն մեծաւ փութով : Քանի՞ քանի՞ մեծամեծ անցքեր կան , Յիսուս Քրիստոսին ժամանակակից , որոց մասին լութեամբ անցած է Աւետարանը . սակայն սրբագործած պահպանած է սոյրի կնոջ լումային յիշատակին , զօր ձգեց նա ՚ի գանձանակին ողորմութեան : Յիսուս Քրիստոս կամեցաւ նաեւ որ մինչեւ ՚ի կատարած աշխար-

հի յիշուի Եկեղեցւոյ մէջ այն աղնիւ եւզա յիշատակին , զօր Մարիամ Եհեղի գլուխ Փրկչին :

Յիսուսի Քրիստոսի խօսքն կատարուեցաւ ամենայն լրութեամբ : Աւետարանն տարածեց ամեն ուրեք այս կնոջ յիշատակին , և ինչպէս որ Յիսուսի բարեկամ Ղաղարու տունն , նոյն պէս եւ Եկեղեցին՝ Աստուծոյ տունն լցուեցաւ անուշահոտութեամբ աղնիւ իւղցն :

Սցյն կնոջ համար , սոյն կնոջ պատշաճն համար է , որ պէտք է պահպանուի այս պատմութիւնն . բայց ՚ի հարկի է նոյնպէս կը պահպանուի եւ մեզ համար : Վասն զի ինչպէս կարելի է կարծել թէ Աստուծած պատուեց մի գործ , որ արժանի չէր պատւոյ : Ի՞նչպէս կարելի է կարծել թէ ինչ որ պատւոյ արժանի է յաջս Աստուծոյ՝ օգուտ չէ նաեւ մեր հոգեւոր շինութեան համար : Աւետարանի մէն մի պատմութիւնն , մէն մի գիճն , իւր գործադրութեամբ , է ՚ի փառս Աստուծոյ և ՚ի շինութի հոգւոցը

Մի սպատմութիւնն կայ միայն , որ
չէ ՚ի փառու Աստուծոյ եւ ՚ի շնուռ-
թիւնն մարդկան , զոր կարգալով իս-
կցն կը բորբոքիմք , խսկցն կ'ուզեմք
դատապարտել այն անձինքն , զոր կը
տեսնեմք յանդիմանուած Յիսուսէն . և
այս մասին հարկ ըստ կար մինչեւ անդամ
որ Աւետարանն յայսներ թէ նոցա
տրտնջման գործին Յուդան էր . հարկ ըստ
կար որ մերկացնէր այս անարժան ա-
ռաքելոյն գաղտնի շարժառիթն : Մեք
արդէն կը դատապարտեմք , որովհետեւ
Յիսուս Քրիստոս դատապարտեց , եւ
այս շատ բնական է : Սակայն եթէ մեք
լինէինք առաքելոց տեղ , միթէ առա-
ջն անդամ այնպէս պիտի ըստ խօսէինք ,
ինչպէս նորա խօսեցան :

Միթէ այսօր խակ , հաղարաւոր ա-
ռիթներու մէջ , չե՞նք խօսիր նոցա
պէս : Մեք դարն որ հետամուտ է օգ-
տակարութեան եւ տնտեսագիտու-
թեան , մեք դրական դարն , ինչպէս
կը սիրեմք անուանել , միթէ Յուդայ-
էն աւելի լաւ պիտի ըմբռնէր սոյն ա-
նօգուատ հեղումն իւզյն և սոյն մեծա-

գին սրատիւնն : Տարակըս ունիմես , որ
մեր գարուն մէջ , մարդկի վախանակ
զարմանալու մարդկութեան բարեկամ
Յիսուսի կարեկցութեան վրայ և ըս-
քանզանալու , որ հայերն բազմացոյց
՚ի կերակուր հազարաւոր նրթելոց ,
թերեւս պիտի զարմանան մնացորդ
կոտորնելն ինայողութեամբ ժողովե-
լու աշխատութեան համար : Ուրե-
մըն ինչպէս կարելի է որ այս վայրիե-
նական բերկութեան համար յանօ-
գուուս թափուած իւզն և բեկուած
շեն հաճելի լինի այն անձանց , որոնք
շատ անդամ հցակապ տաճար մի տե-
սած ժամանակ կ'ասեն . “ Ավասոս այս-
քան աշխատանքն և կրոսուած դրա-
մին : Քանի մի սերունդներ աշխատեր
են սոյն հցակապ շենքն բարձրացնե-
լու և տակաւին աւարտած չեն : Ի՞նչ
է այս . ինչո՞ւ համար այսքան աշխա-
տանք : Աստուած ըստ բնակիր ձեռա-
գործ տաճարաց մէջ . մի անշուք շե-
նուռածն եւս բաւական է : Ապաստո-
նարան , պատշաճաւորութիւն , եւ
ամփոփումն մտաց , ահա ամենայն

բան . ի՞նչ պէտք են ուրիշ շքեղու .
թիւններն : Գեղեցիկ տաճարն մի գե-
ղեցիկ բան է . բայց գեղեցիկն կարե-
ւորաց կարգը չէ : Հաղարաւոր աղ-
քաններ կան , որ կարեւոր կարօտու-
թիւններ ունին և կ'աղաղակին : Պէտք
է դադարեցնել նոցա աղաղակներն ,
և ահա այն ժամանակ մեք տաճար-
ներ շինած կը լինիմք . երբ աղքատ-
ներ չեմք ունենար , այն ժամանակ կը
շինեմք , եթէ պէտք են , մեծամեծ տա-
ճարներ :

Կը տեսնեմք ահա , որ մեր Փրկիչն
խկապէս միայն առաքեալներն չէ , որ
կը յանգիմանէ , և նորա պատասխա-
նըն միայն Մարիամի արարքն գովա-
բանելու համար չէ : Նա կը ներէ քան
թէ կը ջատագովէ : Նա կարեկցութիւն
կը ինդրէ Մարիամին համար քան թէ
ներբողներ : Նա կը պատուէ միայն
Մարիամի գիտաւորութիւնը : Ուրեմն
խնդիրն ամենեւին Մարիամի արած
պատոյ ձեւին կամ նիւթին վրայ չէ ,
այլ նորա սրտին կամ նպատակին : Փրռ-
կիչն կը փափաքի միայն որ չը վատացը

նեն սոյն կինն . վասն զի այս մարդու-
սէր Տէրն կ'ասէ թէ՝ Մարիամ գործ մի
բարի գործեաց յիս :

Արգեօք սոյն գործն ամենէն լան
էր իւր նիւթոյն և ձեւին մէջ : Ար-
գեօք նոյն ժամուն և նոյն դրութեան
մէջ ամենէն յարմար և վայելուն սոյն
գործն էր : Այս մասին չը խօսիր մեր
Փրկիչն . այլ մի բան միայն կ'ասէ .
“ Պործ մի բարի գործեաց գա յիս ” :
Քննեմք այս խօսքերու իմաստն և ամե-
նէն առաջ ուշադրութեան առնումք
վերջին խօսքերն : Մարիամի արած գոր-
ծըն բարի էր Յիսուսի Քրիստոսի նր-
կատմամբ : Այս ամիսին կը յայտնէ
մեր Փրկիչն : Նա չ'ասէր բնաւ , թէ
գործն բարի էր նիքնին , այլ թէ բա-
րի էր Յիսուսի իրեն նկատմամբ : Ի՞նչ
կամի արգեօք հասկացնել այսու : Այս
է արդեօք Յիսուսի չափն եւ կշռն :
Սովոր կը կշռէ և կը գնահատէ որ և
եցէ գործոց բարի լինելն : Բաւականն է
արգեօք որ մի գործ բարի լինի միայն
այն պատճառաւ , որ Յիսուսի նկատ-
մամբ եղած է : Ինչու համար արդեօք

պարզապէս չ'ասէք թէ՛ Մարիամը բարի գործ մի գործեաց, այլ յասկապէս կը յաւելու գործեաց դա յի՞ն միթէ ամեն գործ միայն այն ժամանակին բարի է, եթք առարկան Յիսուս Քրիստոսն է: Ի՞նչ էր այս գործն, եթէ ոչ մի պատիւ, մի յարգանք Յիսուս Քրիստոսին: Այսանե՞նք արդեօք այս յարգանքն որ տրուեցաւ Յիսուսին, որ արժանի է ամենայն յարգանաց: Բայց ոչ ապաքէն այսու կը վղանամք նմա մեր յարգանքներն: Ասէ՞նք արդեօք թէ՛ այս յարգանքն անպատիւ էր և անտեղի. ասէ՞նք արդեօք թէ անխոհեմ էր իւր կերպն և ձեւն: Եթէ այսպէս առ սենք, ուրեմն պէտք չէր որ նոյն կինն այնպիսի անսահման գովեստի արժանանար. ասկայն արժանացաւ նա եւ պէտք չէ աշխատ առնել զնա և վիրաւորել: Վասն զի եթէ յարգանաց ձեւն յանդիմանութեան արժանի կ'եւթեւի մեզ, բան մի կարող չեմք ասել մեք առարկային համար, որ է Յիսուս Քրիստոս: Ուրեմն փոխանակ աճապարելու և դատելու թէ ի՞նչ արար Մա-

րիամ, և փոխանակ քննելու՝ թէ ի՞նչ կարող էր առնել, ամենէն առաջ տեսոն նեմք թէ ի՞նչ կամեցաւ առնել. թէ զնվ կամեցաւ յարգել, և որոյ սիրոյն համար եհեղ իւղն աղնիւ և մեծագիւն: Ապա հարցնեմք մեղ թէ արդեօք այն գործն, որ բարի է Յիսուսի նկատմամբ, միթէ բարի չէ ամենայն մասամբ եւ ամենայն բովանդակութեամբ:

Բաց յայսմանէ եթէ միանգամը ըմբը ըլունեմք գործն սոյն իմաստով, որ մի յարգանք է այն առ Յիսուս, այն ժամանակ կը տեսնեմք այն զգացումներն որ նոյն գործն ներշնչեցին: Այս յարգանքն, այս պատիւն ոչ թէ միայն հաճելի էր այն պատճառաւ, որ ուղղուած էր Յիսուս Քրիստոսին, այլ որ նոյն նմքն Փրկին արժանի էր այս պատւոյն: Ինչ կամին թուղ խօսին ձեւոյն վրայ, սակայն սոյն յարգանքն կը յայսնէ ամեն բան, ինչ որ քրիստոնեայ հոգին պէտք է զգայ Յիսուս Քրիստոսին համար: Եւ արդարեւ ի՞նչ պէտք է ասեմք մեք մեր Աստուածամարդ Փրկչին, և ի՞նչ պէտք է որոնէ նա մեր սրամին մէջ,

մեր պատիւ եւ յարգանք մատուցած
ժամանակ : Ի՞նչ, միթէ բաւակա՞ն է
միայն որ սբանչանամք նորա վերայ ,
յարգեմք զնա և ՚ի վեր դասեմք մեր
մարդկան քամենայն իմաստունն ,
քան զամենայն հերոսս , քան զամեն-
այն գիւցազունս եւ քան զամենայն
մարդիկ : Ա՛չ, այլ ինչպէս որ նա իւր
անձն տուաւ մեղ համար , մէք եւս
պարտիսք տալ մեր անձն նորա համար :
Թէ մէք և թէ ինչ որ ունիմք բոլորն
նման կը պատկանի : Ի՞նչ որ առնեմք
և ինչ որ զոհեմք նորա համար ամենեւ-
ւին չը հաւասարիր այն մեծ զահին ,
զոր արար Նա մեղ համար : Պէտք է
ուրեմն , պատրաստ լինիմք ամեն բան
թողուլ նորա ծառացութեան և փա-
ռաց համար : Ի՞նչ էր արդեօք Մարի-
ամին արածն , եթէ ոչ այս ամենն հա-
մանգամայն :

Կը տեսնեմք ահա , որ Մարիամիւր
ունեցածներէն ամենէն մեծադինն , ա-
մենէն աղիսիւն և ընտիրն կը հեղու , կը
կորուսանէ ՚ի պատիւ Յիսուսի Քրիս-
տոսի . վասն զի արդարեւ կամեցաւ

կորուսանել , ինչպէս եւ աշակերաքն
առարկելով թէ՝ Ընտէ՞ր է իրուստ իւ-
րաշ այդովի , աւելի լաւ կը բացատրեն
Մարիամի միտքն , առանց երեւակայե-
լու և ՚ի խորս թափանցելու նորա դիւ-
տաւորութեան : Բաւական չէ միայն
անուշուտ իւղն գործ գնելն , եթէ
Մարիամ չը կորուսանէ զայն : Եւ ու-
րովհետեւ հեղուլ միանգամ և բո-
վանդակ ՚ի գլուխ Յիսուսի Քրիստոսի՝
կը նշանակէ կորուսանել , ուրեմն Մա-
րիամ կամեցաւ արդարեւ կորուսանել
զայն : Նա լաւ համարեց կորուսանել
նույիրելով զայն ուղղակի ՚ի պատիւ
Յիսուսի Քրիստոսի , քան թէ գործ
գնել թերեւս օգտակար և աւելի խր-
նայողական կերպիւ : Ա՛խ , տարակյա-
չ կայ որ Մարիամի ունեցած հարըս-
տութեան մէջ նոյն աղիսիւ իւղն ամե-
նէն մեծագինն էր : Ա՛խ , տարակյա-
չ կայ որ Մարիամ եթէ մի այլ մեծա-
գին բան ունենար , անշուշտ առաջ
զայն պիտի զոհէր . վասն զի կը տես-
նեմք որ հեղուլ միայն գոհ չը լինիր ,
այլ չին եւս կը բեկանէ , այն կճեաց

չիշն որ զայն անուշահոտ իւղն կը պարունակէր : Այս էր, որ առիթ կուտաք Յուգային զայրացմամբ աղաղակելու , Ընդէ՞ է իրուստոր այդ . վասն զի ծաւալուած անուշահոտութիւնն կարող էր զուարձութիւն տալ . իսկ շիշի բեկումն ինչ օգուտ կար : Բայց շատ կը սխալմիք երբ այսպէս մոտածեմք , Մարիամի դիտաւորութիւնն այն չէր , որ անուշահոտ իւղն հեղողի զուարժանութիւն պատճառէ , այլ նա կը փափաքէր կորուսանել ինչ որ իրեն համար թանիագին էր : Նա կամէր յայտնել եւ հաստատել միանդամայն , որ չունի ոչ ինչ առաւել մեծագին քանզիսու Քրիստո : Նա կը յայտնէր , որ պատրաստ է ամեն զրհողութիւն առնել իւր Փրկչին համար : Նցն պատեհ առթիւ Մարիամ աղնիւ իւղն միայն եհեղ ՚ի գլուխ Փրկչին , որ զոհ էր և միանդամայն յարգանք , որ իրական գործ էր եւ միանդամայն նշան իւր պրտի զգացման և դիտաւորութեան : Նա կը նուիրէ և կը պաշտէ : Այս դիտաւորութեամբ ահա եհեղ նա աղ-

նիւ իւղն , այս դիտաւորութեամբ եւ բեկ նա կձեայ շիշն : Եւ ինչո՞ւ արդեօք ուրիշ բան չունի Մարիամ որ կորուսանէ այն Փրկչին համար , որ իւր անձն կորոյ , իւր անձն ութացաւ Մարիամին համար : Ինչո՞ւ արդեօք Մարիամը շր կարողանար խորասկել , բեկանել իւր անձն իւր Փրկչին համար : Այս եթէ լաւ քննեմք , կը տեսնեմք , որ Մարիամ երբ անուշահոտ իւղն վտակօրէն կը հեղու իւր Փրկչի օրհնեալ ձակատին վրայ , նոյն վայրկենեն կը հեղու մի այլ աղնուագոյն անուշահոտութիւն : Երբ շիշն կը բեկանէ , յորմէ կը ծաւալի բուրումն անուշութեան , նաև ընդ նմին կը բեկանէ իւր զգացեար սիրան , յորմէ կը ծաւալին նոյն տան մէջ վիշտ , սէր և յոյս , որք առաւել աղնիւ են քան զըալասան , քան զիրնդարուկ եւ քան վասունկս անուշուն : Դուք ըստ նշարեցիք այս հոգեկան անուշութեան ծաւալումն , մվ անհամբեր և աններող աշակերտք . դուք միշայն նարդեան իւղն և բեկուած շիշն տեսաք : Ի զուր ծաւալեցաւ ձեր առ-

Աւ Մարիամի սրտի անուշահոտութիւնն . բայց ձեր Տէրն հոտոտեց զայն : Նա հասկցաւ և գնահատեց այն դործն , զոր ձեր հպարտ սրտերն տակաւին կարող չէին ըմբռնել և դդալ : Նա խոր թափանցեց և կարդաց խեղճ Մարիամիներքին վիշտն : Կա լսեց նորա դղջման ներքին արտասունդներն , որոնք կարող չէին թերևս հեղանիլ և կաթիլ կաթիլ հոտելնորա սրտին վրայ : Յիսուս կը տեմնէ այս համբ և լրին վկտաց գաղտնիքն : Փրկին և մեղաւոր կինն կը ճանաչեն եւ կը հասկնան զիրեար : Լուս են նոքա , բայց այս լրութեան մէջ մի սքանչելի և անդատմելի դործ կը կատարուի , զոր դուք կարող չը հասկնալ և ըմբռնել , մինչեւ որ չգգաք նոյն վիշտն և նոյն սէրն , մինչեւ որ ը ծաւալէք Յիսուսի գլխոցն վերայ նոյն անուշահոտութիւնն , մինչեւ որ ը թանաք նորա ոտքերն ձեր արտասուքներով եւ մինչեւ որ ը բեկանէք ձեր սկրտն նորա առջեւ :

Մի ասէք ուրեմն Մարիամին . Ընդէլ է իրուստու այդ : Վասն զի նա

վշտահար է , նա զգածուած է , նա յափշտակուած է եւ կարող չէ ձեր խօսքերն լսել եւ հասկնալ . եթէ այս վիճակին մէջ ըլ լինէր , անշուշտ պիտի ասէր ձեզ . “Ես կը ցաւիմ , կը վշտանամ աւելի այն պատճառաւ , որ կարող չեմ աւելի զոհել , աւելի կորուսանել : Այս , ինչքան փոքր բաներ են այս ազնիւ իւղն եւ այս կճեայ շվճն : Ի՞նչքան փոքր է սրտիս համար աշխարհն բովանդակ : Այս , ինչո՞ւ չեմ կարող իմ սոյն ուրախական յափշտակութեանս մէջ , իմ Փրկիչս առջեւ , առ ոտն կոխել ամեն բան , ինչ որ զարմանափ է աշխարհին համար , ինչ որ կը պատրեն մեր զգայարանքներն : Ինչո՞ւ համար կարող չեմ առ ոտն կոխել ամեն շքեղութիւն , ամեն փառք եւ ամեն վայելը ութիւնք արբայականք : Բայց ես կ'առնեմ , ինչ որ կարող եմ որպէս զի իմ Փրկիչն ճանաչէ որ ես զինքն կը սիրեմ : Ինչ որ ես կը նուիրեմ , ինչ որ ես կը զոհեմ , սոքա արժանի չեն զոհ անուն անդամ կրելու : Ազա միայն նշաններ են : Այս , երանի

թէ սոյն նշաններն կարողանացին ձըշ
ախւ յայտնել, ինչ որ կը յուղի, ինչ որ
կ'անցնի իմ սրտիս մէջո:

Այսպէս կը մտածէ ահա Մարիամ,
այս կ'երեւի ահա իւր բողը վարժանց
մէջ: Երբէք բաւական չեն նորա հաւ
մար բեկուած շիշն և ծաւալուած ա-
նուշահաս իւղն: Նորա սիրտն վառ-
ուած է. նա յանձն կ'առնու մի ամեն
նախոնարհ պաշտօն. նա օտարի տան
մէջ կը լուայ Յիսուսի սոքերն, որ տան
ախրոջ պարտաւորութիւնն էր: Կա կը
լուայ ոչ թէ ջրով, այլ աղնիւ իւղով:
Կա կը սրբէ ոչ թէ զենքակով, այլ իւր
մազերով: Միովլ բանիւ նա գործ կը
դնէ ամեն ցոյց. ամեն նշան երկիւղա-
ծութեան և երկրպագութեան: Կա
կը խոնարհի, նա կը պաշտէ, նա չը
խօսիր, վասն զի խօսքն բաւական չէ
նորա զգացածներն արտայայտելու.
վասն զի նորա պաշտածն միայն մարդ
չէ, և ոչ առաջննն իմ մարդկանէ, այլ
իւր Փրկին, իւր Աստուածն:

Եթէ աշակերտներն կարող չեն
Մարիամի սրտին մէջ տեսնել ինչ որ

իրենց Վարդապետն կը աեւնէր, դանէ
կարող էին ենթագրել, կարող էին մա-
կաբերել Մարիամի սէրն, վիշտն և
երախտագիտութիւնն: Նորա կարող
էին ենթագրել որ այս փափուկ սիրտն
այս աղնիւ հոգին, երկար սպասելին
գինի, իւր փրկութեան Խշանին հան-
գիսկելով, կարող չէր ժուժել, կարող
չըր իւր սրտի թռիչն սանձահարել,
կարող չէր երկար ժամանակ խորհիլ
եւ դատել թէ ինչ ձեւ յարգանք
պէտք է մատուցանէ Յիսուս Քրիստո-
սին: Ի՞նչ կը լմնէր արդեօք եթէ ա-
շակերտներն ձանաչէին, եթէ հազրոգ-
լմնէին մանաւանդ այն զգացումնե-
րուն, որոնք Մարիամի սիրտն ու հո-
գին կը յուղէին: Նորա չէին կարծէր
եւ չը գիտէին աակաւին թէ այն օրն
երբ Յիսուս կը ճաշէր իրենց հետ Աի-
մօնի սեղանին վրայ, իւր առաքելու-
թեան և պաշտօնին վերջն օրն էր.
վասն զի հասած էր ժամն չարչարա-
նաց:

Աշակերտք չէին նախատեսեր նաև,
որ իրենց Վարդապետի ձանապարհն

Բեթանիայէն ՚ի Բեթփակէ , Բեթփաւ-
կէն յՆըռուսաղէմ , էր ճանապարհ
մահուան . չէին գիտեր , որ իրենք
կ'ուղեկցին նմա ՚ի տեղի շարչարանաց
եւ օրերն կարձեալ են արդէն : Ի՞նչ
կ'ասեմ : Միթէ կամեցան նոքա հա-
ւատալ , երբ Փրկին կրխօսէր իւր մօ-
տակայ մահուն համար , ցորենի հա-
տին համար , որ պէտք է մեռներ , որ
վերստին ծնանի , բազմաստակուի և
շատ արդիւնք տայ : Կամեցան նոքա
հաւատալ բարյանալոյն ՚ի խաչ , բաղմե-
լոյն ՚ի գահն խորհրդաւոր , որուն վե-
րային առ ինքն պիտի ձգէր ամեն մար-
դիկ : Քաւ լիցի , Տէր , կ'աղաղակէին
նոքա . քաւ լիցի Տէր . ըստ պատահիր
քեզ այսպիսիքան : Արդեօք խեղչ կինն
հաւատաց աւելի պարզութեամբ , ար-
դեօք աւելի լատ հասկացաւ նա : Ար-
դեօք աւելի թափանցեց նա ՚ի խորս
խորհրդոյ Խաչին , որ յայտնուած էր ,
բայց Յիսուսի հետ անբաժան շընող
աշակերտներն տակաւին հաւատացած
չէին : Արդեօք Մարիամ կանիսէց քան
դաշակերտն Խաչի խորհուրդն հաւ-

կընալու : Լաեցէք Յիսուս Քրիստոսին ,
թէ ի՞նչ կը խօսի Մարիոսի Աւետարա-
նին մէջ . “ Յառաջագոյն խնկեաց (Մա-
րիամ) զմարմին իմ՝ ՚ի նշան պատա-
նաց ։ Նա պահպանած էր այն իւղն
իմ թաղման աւուր համար : Թաղման
աւուր համար : Բայց Մարիամ արդէն
գործ կը դնէ զայն իւղն , արդէն կը
հեղու ամբողջապէս Յիսուսի գլխոյն
եւ ոսից վերայ : Հասած է ուրեմն
թաղման օրն , և արդէն կը թաղչ ու-
րեմն Մարիամ զՅիսուս : Ա.յն , Ա.յն ,
այն օրն , ըստ հաւատաց Մարիամի , ար-
դէն օր թաղման է : Նորա վիշտն կը
կանիսէ քան զմամն սգոյ : Նա արդէն
կը տեսնէ զոհն կատարուած . նա կը
տեսնէ զոհն հարեալ , որ իւր առջեւ
կը շարժի , նա կը տեսնէ Գառն Աս-
տուծոյ զէնուած , արիւնաթալթաւ ,
անշունչ և անմուռնչ : Մարիամ իրեն
հետ խօսող Յիսուսին թաղման պա-
տիւ կը տայ , կը խնկէ , կ'անուշահո-
տէ այն իւղով , զոր պահպանած էր
անկենդան մարմինն օճանելու համար :
Ա.յշանի կենդանի է ահա Մարիամի

Հաւատան . այսչափ կանխած է ահա նորա վիշտն , նորա ցաւն յառաջ քան զժամանակն . այսչափ թափանցած է նա ՚ի խորս մտաց և խորհրդոց Յիսուսի Քրիստոսի : Ի՞նչ կը կարծէք , մի թէ Քրիփն չը տեսնե՞ք այս ամենն . մի թէ չը կարդա՞ր Մարիամի սիրտն . մի թէ չը նշմարէք նորա հեղ , ամբի՞ծ և ջերմ հաւատն : Այս , կը նշմարէք , կը տեսնէ , ուստի եւ Մարիամի գործն բարի կ'անուանէ , որ բարութեան աւ մեն պայմաններն իւր մէջ կ'ամփոփէ :

Ո՛հ , կը տեսնե՞ք ահա , որ կարող չէմք մեք ասել Յուղայի հետ . “ Ըեղ զէ՞ր է կորուստ իւղոյդ այդորիկ ! ” Վասն զի կորուստ չը կայ բնաւ : Մարիամի հաւատոց և միրոյ օրինակն նոյն հաւատքէն և սէրէն դարուց ՚ի դարս իրեր կենդանի անուշահոտութիւնուրուած և ծաւալուած հոգեւոր շինութիւնն , հազար եւ հազար անդամ աւելի կ'արմեն քան հեղուած աղնիւ իւղն և բեկուած չին : Բայց եթէ այս կինն իւր հաւատոց աջօք Յիսուսի Քրիստոսի մահն եւս չը նշմարէք , այս-

քան մօռակայ , այսքան գառն , այս քան անկառասափելի , գարձեալ կզգար , որ իւր հետ խօսող աշխարհի Փրկիչն և Աստուծոյ Որդին պիտի չը մնար միշտ երկրի վերայ : Օր մի պիտի թողաւր աշխարհս , ուր իւր ներկայութեամբ կը լուսաւորէք մեր տարագրութեան , մեր պանդխատութեան մթութիւնն : Օր մի պիտի թողաւր աշխարհս , եւ իւր չնորհօք և ճշմարտութեամբ զեղուն խօսքերն այլ եւս պիտի չը լսուեն : Կըզգար Մարիամ , որ աղքատաներն միշտ մեզ հետ ունիսք , բայց ըդ Յիսուս պիտի չը կարողանամք միշտ մեզ հետ ունենալ : Բայց յայսմանէ , Մարիամ կարող չը առաքելոց պէս միշտ Յիսուսի Քրիստոսի հետ շրջիլ և նորա տեսութեամբ և խօսքերով կըշտանալ : Արդեօք տեսամծ էր նա շատ անդամ գՅիստու . արդեօք լսմծ էր երկար ժամանակ նորա խօսքերն : Անձանօթէ մեզ այս կէտն : Բայց որչափ փարք բան էին սոյն օրհնեալ հանդիպումներն համեմատելով սովորական ընկերակցութեան հետ . որչափ հա-

զուագիւտ էնն , համեմատելով Մարիամի զգացած կարստութեան հետ ։ Այն , ինչ յափշտակութեամբ , ինչ հրձուանօք կը դիտէր , կը տեսնէր Յիսուսիւտ էր գալուստն : Ի՞նչ շտապաւ , ինչ եռանդով կը չքէր յոտո Յիսուսի և կը ողարսաստուէր նորա աստուածային խօսքերն լսելու , ճաշակելու և մի համեմատամշը կրուսանելու : Յաւիտենականութեան չափ մեծ սոյնպիսի մի երշանիկ ժաման մէջ , եթէ Մարիամ առվայր մի կը մոռնայ աղքատներն , (ողքի բացակայութեան Յիսուսի պիտի ներկայացնեն զնա) և կ'երթայ զոհեւու այս աստուածային բարեկամին համար իւր ժամանակն ու ճոխութիւնն : Եթէ Մարիամ կ'ածասպարէ ծառայել և պատուել զնոյն իսկ անձն այն Փըրի չին , զոր յետ ժամանակաց պիտի յարգէ և պատուէ անշու շոյ յանձն աղքատաց , եթէ այսչափ միափուկ է Մարիամի դիզբն , ով կարող է ուրեմն չակնածել սոյն դիզբէն . ովկիարողէ համարձակիլ այսպանել և կշտամբել զՄարիամ , եթէ ոչ այն սառն սրտերն , ու

ըսց աչքին , ինչ որ սովորական չափավոչ , անմոռութիւն է և անպատճութիւն , որոնք այլոց խնայութիւն եւ ժուժկալութիւն կը քարողն , բայց իրենք ոչ ժուժկալութիւն ունին և ոչ չափաւորութիւն :

Միիթմարուէ , Մարիամ . այն Առտուածն , որ սիրով մարդ եղաւ , նոր կը ներէ և կը թողու՝ զնիքն սիրողներու պարտքն : Քաջալերուէ եւ դու , խեղչ ժողովուրդ , որ հեղ և մարդասէր թագաւորի գալստեան աւետիսն ըսծած ժամանակ , նորա շուրջն բոլորեցը եւ յաղթական հանգէս կակամեցիր մինչեւ ՚ի քաղաքն տիրասպանն : Յիսուս խօսեցաւ . կարող ես դու ուրեմն , ժողովուրդ , հետեւիլ պրափշարժմանն , կարող ես տարածանել հանդերձներդ ՚ի պատիւ հեղարքային , կարող ես արմաւենի ստեր սփռել , որպէս զի փոշոտ ճանապարհի վերաց կանացեղ կուպար պատրաստես Յիսուսին : Մի երկնչիր , որ Յուդան պիտի աղքաղակէ . “ Ընդէրէ կորուսադ այդ ” : Նորա Տէրն և վարդապեան կամի , որ

Հինի այդ կորուստն , և նորա գթութեն
ու ներսղամուռթիւնն խոտացուածէ
ձեր երգերուն և արմաւենիներուն :
Չէ ասաւած բնաւ թէ վերջին դա-
տաստանի օրն պիտի ըներսւի ամե-
նարդոր եւ ամենասուրբ սիրոյ յոր-
դութեանց կամ չափազանցութեանց:
Քո սէրդ կը զեղանի , քո սէրդ կը յոր-
դի , ժաղովուրդ , և այս յորդութեան
նշաններն են ուրախական երգերդ ,
հանգերձեներուդ ասարածումն եւ կա-
նաչ ուստոց սփառումն :

Հարկ կայ դարձեալ խօսիլ թէ
որչափ ուսումն կը ներկայացնէ մեղ
սոյն պատմութիւնն : Որչափ քննեւ
ցինք , որչափ խոր թափանցեցինք ,
այնչափ գտանք և խրատներ ելան ա-
նուշահոս ամանի անուշահոս պատ-
մութենէն : Քննել անգամ հարկ չըր ,
բաւական էր միայն կարգալ զայն , այն
մեծ և փրկարար գասն գտնելու և ու-
սանելու համար , այն է՝ մեր նմանեաց ,
մեր եղարց գործոց մէջ գործողի դէ-
պատրութեան կամ սրբին նայել :

Մի գործ խկապէս այն արժէքն

ունի , ինչ արժէք որ ունի գործողի
դիտաւորութիւնն . կամ աւելի պարզ
ասել , գործողի դիտաւորութիւնն գոր-
ծոյ արժանաւորութեան ճշմարիտ չա-
փն է : Այն ճշմարտութիւնն չը ճա-
նաչել , կը նշանակէ կործանել բովան-
դակ բարյականութիւնն և նաեւ ու-
րանալ բարյականութեան սկզբունքնէ :
Ամեն մարդ գիտէ , որ այս այսպէսէ .
բայց ամեն մարդիկ դարձեալ կը մո-
ռանան այն ճշմարտութիւնն : Եւ մի-
թէ այսպահի միայն . աւազ , երբ կ'ու-
ղեն մարդիկ մի բարի գործոց արժա-
նաւորութիւնն նուազեցնել , այն ժա-
մանակ միայն գործողի դիտաւորու-
թիւնն ձեռք կ'առնուն . այն ժամա-
նակ միայն ամեն ձիգ կը թափէն , կը
կրկտէն , կը խճքծէն մարդոց դիտաւո-
րութիւնն և գործն անիրաւ հանելու-
համար միայն կը պահպանէն այս կա-
նոնն : Զարամանութիւնն , երբ կը տես-
նէ թէ մի մարդոց համբաւն կը ծաղկի
իւր գործքերու վերայ իւրեւ մի համ-
տարուն ծառի վերայ , խկայն կը առ-
զակի իւրեւ որդն մինչեւ նորու վա-

բուց բարուց արմատներն , որպէս
զի կրծելով թարշամեցնէ . բայց թէ
գործն վատ է արդեօք և կամ պար-
զապէս միայն թերակատար է , ահա
այս միայն կը դատան առանց դիտա-
որութիւնն քննելու : Եւ մէք , որ
չասկցած ենք թէ մի գործ առ
երեսս կարելի է բարի երեւիլ , բայց
եթէ մինչեւ սկզբունքն թափանցենք ,
կարող է վատ լինիլ . մէք , որ վատու-
թիւնն գտնելու համար այսուի յա-
ջողակ ենք , ընդհակառակն չենք ու-
զեր խորհիլ և մտածել , որ մեր աչքին
երեւցած թերի կամ անօդուած գործն
կարող է ունենալ խիստ լաւ սկզբունք :
Բայց այն բարի սկզբունքն գտնելու
համար մէք միշտ անփոյթ ենք և ան-
տարբեր : Ի՞նչ է արդեօք սորա պատ-
ճառն . արդեօք այն է , որ շատ ան-
գամ առակաւ կը խօսաւի թէ՝ մարդոյ
միտքն հակամիտ է առ չարն , քան առ
բարին : Այս , ողքալի և ամարդի ա-
ռած : Սակայն եթէ միայն տասն ձըշ-
մարիտ լինի այս առածն , միայն տասն
անդամ պէտք է աշխատիլ սուտ հա-

նել զայն և այն ժամանակ միայն հա-
ւատալ գործոյ գէշութեանն կամ վա-
տութեանն , երբ յայտնի և անհերքե-
լի հապացոցներ կան : Ինչու համար
արդեօք հետամուտ չենք լինիր և չենք
փութար որոնել բարին , որ կարող է
չարութեան մօտ գտնուիլ : Ինչու հա-
մար բարին այնպիսի հետաքրքրու-
թեամբ չենք որոներ , ինչպէս կ'որո-
նենք չարմ : Ինչու համար մանաւանդ
մեր Փրկիլ թշուառ աշակերտին նման
ամենէն առաջ և միմիայն կը տեսնենք
գործոյ տկար կողմն և բարի դիտաւո-
րութեան հետ խառնուած սիսալմուն-
քըն : Ինչու համար փոխանակ այսպէս
անելու , նախ և առաջ մեր աչքերն չենք
յառեր բարի նպատակին վերայ , որ
նոյնպէս յայտնի կ'երեւի մեզ և առե-
լի կարեւոր է ուշադրութեան : Քանի
քանի անդամ հազուագիւտ և բարի
նպատակներն գտնելին գինի , փոխանակ
ուրախանալու , կը ջանամք յարդը նը-
ւագեցնել և ասել թէ՝ այս սովորական
է ամենուն . և այնչափ սովորական ,
որ որոնելու անդամ հարկ ըս կայ : Ավ-

անգութե և թիւր հետեւութիւն։ Զը
մեզանչենք, եղաքը, եւ երբ կարող
չենք բացարձակապէս գովել մեր նը-
մանեաց միոյն գործը, թնդ ըլ գովենք,
այս արդարացի է, բայց զգուշանանք
ըլ վիրաւորել և ըլ վշտացնել գործողի
սիրուն։ Ընդհակառակն ցոյց տանք
գործողին, որ մեք կը ճանաչեմք և կը
պնահատեմք իւր բարի կամքն։ ցոյց
տանք, որ ամենէն առաջ սոյն բարի
կամքն է, զոր մեք կը ճանաչեմք և կը
սիրեմք։ Նորհակալլինք գործողէն
այսպիսի մի աշխարհի մէջ, ուր մեք
եւս գիտեմք, որ խիստ սակաւ են
բարին կամեցողներն։ Նորհակալ լի-
նինք, բարեմաղթենք, որ բարի դի-
տաւորութիւն ունեցած է և բարու-
թեան ցանկացած է։ Խստութեամք
եւ արհամարհուս ու դաժան դասո-
զութեամք ըլ թառամեցնենք անձնը-
շիրութեան այն նորաբողըոջ և փա-
փուկ ծաղիկն, որ սկսած է ծաղիկի
նորա ծոցին մէջ։ Զը լինինք իմաստուն
առանց չափու և սահմանի, ըլ լինինք
իրաւագէտ և իրաւարար առանց գը-

թութեան և ողորմութեան։ Միայն
չ դատենք, այլ և սիրենք։ Մշակենք
քնիրուշութեամք, ուռոգենք սիրով և
բարի յօժարութեամք, և ըլ վիրաւո-
րենք այն տուննին, զոր բարեբախտա-
բար կը տեսնեմք սերմանուած։ Յար-
գենք եւ պատուենք բարի դիտաւո-
րութիւններն, առանց ծաղվելու եւ
առանց չափազանցութեան։ Կ'ասեն
թէ՛ դժոխին սալյանատակուած է բա-
րի դիտաւորութիւններով, բայց ոկեով
է իմանալ, որ Մարիամի դիտաւորու-
թեան նման չեն այդ դիտաւորու-
թիւններն։ Մարիամի դիտաւորու-
թեան նման դիտաւորութիւններն են,
որով զարդարուած է երկինքն և կը
ցոլց շող ՚ի շող, և երբ մեք կը յար-
գեմք այսպիսի դիտաւորութիւններն,
կը յարգեմք զԱստուած, որ զայն
կ'օրէնէ, կը յարգեմք և զՀոգին Առարք,
որ զայն կը ներշնչչ =

Բաց յայսմանէ, երբ կը դատեմք,
ոկեով է ՚ի հաշիւ առնունք դրից եւ
կարօտութեանց զանազանութիւնն։
Աշակերտաներն թերի էին այս երկու

կանոնին մէջ, թերի էին առաջնոյն մէջ, երբ կ'անարգէին Մարփամի սիրոց եւ ուրախութեան զեղմունքն , առանց նայելու, որ կարող չնա իրենց պէս ամեն տեղ ուղեկցիլ և հետեւիլ Յիշուսին, վասն զի մի տիկար կին էր, և միայն հեռառէն կը վայելէր նորա աստուածային ներկայութիւնն : Թերի էին աշակերտաներն երկրորդին մէջ, երբ կամէին մի կնոջ վասփուկ և եռանդուս սիրուն այն սահմանին մէջ ամփոփել, ուր ամփոփուած էին իրենց յարգն ու եռանդն առ Յիսուս : Կան այնպիսի բնաւորութիւններ , եւ բոլոր կենաց մէջ կան այնպիսի վայրիեաններ , որոց վերոց պէտք է յատուկ ուշադրութիւն գարձնել : Պէտք է այնպէս անել, որ Աստուածէ մեղ պարզեւուած ամեն հոգեւոր կարողութիւններն գոհ լինին : Ննապէս որ անիրաւութիւն է եռանդն արգելուն , նոյնպէս անմըսութիւն է եռանդին հրամացելն , կամ զայն սահմանի տակ դնելն : Անհնարին է բարեպաշտ հոգւոյն սահման դնել և հրամայել թէ միմիայն այս ե-

զանակաւ պէտք է պատուես և պաշտես զայն , զր կը սիրես : Ամեն հոգիներու խորոց մէջ կայ նաեւ այնպիսի մի կարօտութիւն , որ ոչ թէ կանոնաւորուելու , այլ ծաւալուելու կը ձգտի , կարօտութիւն , որ երբեմն մեզմէն դուրս կը ցատկի և կը չանայ միացնել զմեղ մեր սպաշտած առարկային հետ , աւելի զգալի եւ աւելի անընդմիջական կերպիւ , քան թէ պարզ հնազանդութեամբ :

Աչ հնազանդութիւն է այս և ոչ պարտաւորութիւն , ոչ կարես հրամայել և ոչ կարես ստգտանել : Այս է հոգւոց բուռն զօրութիւնն : Սյն բուռն յուզումն , սյն եռանդեան շարժումն , որ ՚ի վեր կը բարձրացնէ զհոգին իւր սովորական տապաւորութիւններէն և կը տայ հոգւոյն զգացումն և ճաշակ աստուածութեան , սյն յուզումն կը կազդուրէ , կը զօրացնէ զհոգին և հնազանդութիւնն ու պարտաւորութիւնն աւելի քաղցր եւ աւելի սիրելի կը կացուցանէ նորա համար : Պէտք է իմանալ , որ ամեն բան ինչ

որ մեզ գեղեցիկ կ'երեւի , միշտ բարի չէ . բայց Աստուած կամեցած է , որ ամեն բան , ինչ որ բարի է , գեղեցիկ լինի . և արդեն բարին և գեղեցիկն ՚ի սկզբան մի և նոյն անունն ունեն . վասն զի գեղեցիկն թէեւ միշտ բարի չէ , բայց բարին միշտ գեղեցիկ է : Գեղեցիկութիւնն ճշմարտութեան մի մասն և մի ձեւն է : Ով որ կը տարակուսի այս մասն , և՛ղ կարդայ Սուրբ Գիրքն , յորում ճշմարտութիւնն առ գեղեցիկութիւնն այնչափ սերտիւ . միացած են իրարու հետ , որ անհնարին է իրարմէք բաժնել . և ամենէն վաեմ ասացուածներն ու իրատաներն արտայացուածնեն ամենէն վաեմ և ամենէն սրանչելի լըզուաւ : Հոգեկան եռանդն դատապարտելին առաջ , թնդ կարդան Ա . Գիրքն , որ լի է եռանդեամբ , որ զեզուն է բուռն զգացմանց յորդութեամբ ; ուր կը տեսնեն մարդարեից միրան « Որ կ'եռայ վաեմ խօսքեր արտասահներւ համար » : Բոլոնդակ Աստուածաշունչն մի անուշահուսութեան աման է , որց անմահուան բուրժունը

ներն կը բարձրաւան , կը ծաւալին դարուց ՚ի դարս մինչեւ յաթու Գառին Աստուածոյ : Բոլոնդակ Աստուածաշունչն մի վաեմական երգոց դաշնակաւորութիւն է , որց բացրաձայն և միաբանական գեղգեղանկներն ներշնչուած են Աստուածմէ , և են իբրեւ մի , մերթ ուրախուական , մերթ արտմական , մերթ մեղմ և մերթ յաղթական , նախերդանկը երկինից յաւիտենական դաշնակաւոր երգասացութեան : Այս , եթէ Հոգին Սուրբ տակաւին կը կազմէ բարեպաշտ հոգիններու մէջ երգոց նման հառաջանիքներ , թողէք , որ նցն հառաջանիքներն բարձուանան դէպ ՚ի երկինքն իրենց բավանդակ դաշնակաւորութեամբ : Դուք թողիք Մարիամին , որ իւր անուշահուսութեան ամանն բեկանէ . ո՞հ , քանի քանի Մարիամի նման վառուած բարեպաշտներ կան , որ աման ունին բեկանելու և անուշահուսութիւն՝ ծաւալիլու :

Կրօնն , որ մի առարինութիւն է , թողէք , որ նցնակէս մի երգ լինի , երբ Աստուած կամի : Աղագային աւանդեցէք

զայն, որուն վերայ կը զարմանաք անցելցն մէջ։ Քրիստոնէութիւնն, առաջն դարուց մէջ, գոհ չէր լինիր միայն մարդոց կենաց մէջ հօսիլ և ընթանալ կրթեւ գետ խոր տաշտին մէջ։ այլ կը յորդէր, գուրս կը զեղար մարդոց սրբուն և հանձարէն և երկիրն կը ծածկուեր սրանչելիքներով։ Աշխարհն չէր զղար, և չէր տրտմիր որ ճշմարտութիւնն շքելութեամբ կը փայլի և մեծամեծ ճշմարտութիւններ՝ պարզ և լսեմ առակիներով կը բացատրուին։ Աշխարհն կը տեսնէր, որ ամեն ձեւերով կ'աճին, կը բողըովին այնպիսի հրաշալիքներ, որոց վերայ բնական մարդն երբէք գաղափար ունեցած չէր։ Կրօնն կարող է ծնանիլ այժմ և առյապայն նոյնպիսի հրաշալիքներ, վասն զի ոչ ճշմարտութիւնն եւ ոչ հօգին չեն սպասիր երբէք։

Փութանք ուրեմն, եղբարք, վերջին և ամենակարեւոր դասն բացատրելու։ Բարի դիտաւորութիւնն, որ ոչ այլ ինչ է եթէ ոչ սէր, անտարակյա կարող է սիսալի երբեմն։ բայց

չը սիսալիր միշտ և յաւիտեան։ Այն աստուածային հուրն, զոր հոգին Սուրբ կը վսուէ, այն աստուածային հրայն մէջ լցոն անբաժանէ Սրբմութենէն, և մեք ամեն կերպիւ պարտաւոր ենք խոստովանիլ, թէ ով կամի Աստուծոյ կամքը կատարել, նա կարող է Ճանաչել ոչ թէ միայն Աւետարանի յայտնած հիմնական ճշմարտութիւնն, այլ ամեն ճշմարտութիւններ, որոնք կենաց մէջ և պաշտաման մէջ կատան հիմնական ճշմարտութեանն ձեւ մարմին և բացատրութիւն։ Մեր սիրելու ժամանակն իսկ մէնք կարող ենք սիսալի շատ բաներու մէջ և կարող ենք սիսալի ընդ երկար, բայց սակայն սէրն լցու է, սէրն միշտ կը ձգտի առ լցոն։ Ի՞նչպէս կարելի է սիրել զջիառու Քըրիստոս և միայն բաւականանալ անուշահոտութիւն ծաւալելով նորագլխոյն կամ նորա սեղաններուն վերայ։ Ի՞նչպէս կարելի է սիրել զջիսուս Քըրիստոս և արհամարհել այն գործերն, զոր նա տուած է գործելու, կամ գործել լցոյնս այլ եղանակաւ և այլ իւ

մաստով, ի՞նչպէս կարելի է սիրել զՅիւ
սուս Քրիստոս և մռանն աղքատներն,
զորս յանձնած է նա մեզ իբրեւ իրեն
ներկայացուցիչն եր, անհնարին է այս
պէս աւնել վասն զի այնուհետեւ կառ
կածի կ'ենթարկուի դիտաւորութեան
անարատութիւնը, երբ հետեւու
թիւններն համապատասխան չեն. թէ
մարդկութեան եւ թէ՛ իւրաքանչիւր
մարդոյ ընթացքն դէպ ՚ի ճշմարտու
թիւնն յամի է, և քրտնաշխատ, բայց
միշտ ապահով : Քրիստոնէութիւնն
այս յատկութիւնն ու անդանալի իրա
ւունքն ունի, որ նորա անկեղծ աշխ
իերտներն, որոնք ծարաւի են ճշմար
տութեան, որոնք հետամուտ են ճշմար
տութեան, երբ ըմբռնեն նոյն Ճ՛Հ
մարտութիւնն՝ կը հետեւին ըստ չու
փու իրենց քրիստոնէութե՛, Այնպիսի
սխալմունքներ կամ մօլորութիւններ
կան, որոնք անկարելի են : Տարա
կայ չկայ, որ Մարիամ կարաջ չէր,
իւր Տիրոյ հեռանալին զինի, մռան
նալ աղքատներն, որոնք իրեն հետ է
ն, և նոյն իսկ իւր Տէրն իրեն հետ էր

յանձն աղքատաց : Աարիամ իւր առ
Փրկիչն ունեցած սիրովն ոչ միայն կա
րող չէր աղքատներն մռանալ, այլ
ընդ հակառակն որչափ աւելի կը սի
րեր զՅիսուս, այնչափ աւելի եւս կը
սիրեր զաղքատ : Այն օրէն տեսաւ
Մարիամ՝ զՅիսուս յանձն իւրաքան
չւր աղքատաց : Այն օրէն աղքատ
ներն սիրելի և պաշտելի եղան, իբրեւ
առարկայ աստուածային մարդասիրու
թեան և իբրեւ կենդանի պատկերներ
իւր Փրկիչն, զոր կը սիրեր, զօր կը
պաշտեր, զօր կ'ողբար և արտասուօր
ոտքերն կը թանայր : Մարիամ ամեն
աղքատի մէջ տեսաւ այն Փրկիչն, որ
տեղ մի չ'ունէր իւր գլուխն դնելու
համար . տեսաւ ամեն պանդիստի մէջ
այն երկնաւոր Նիւրն, զօր իրեններն
անգամ չընդունեցին . տեսաւ ամեն
տառապելոց և զրկելոց մէջ այն Ար
գարն, զօր աշխարհի ատելութիւնն
անարգեց և գատապարտեց : Վերջա
պէս կարող չէր Մարիամ թշուա
մեղաւոր մի տեսնել, առանց միշելու
այն մարդասէր Տէրն, որ մեղս պար

վասն մեր , զի մեք եղիցուք նովաւ
արդարացեալք : Ամեն դժբախտ , ա-
մեն հալածեալ կը ներկայացներ Մա-
րիամի աշքին՝ հեղ , դատապարտեալ
և վշտակիր Յիսուսի պատկերն : Եւ մի
թէ ինչ որ մենք Մարիամի համար կը
խօսիք Ճշմարիտ չէ նոյնափես ամեն
Ճշմարիտ քրիստոնէից համար : Յիսուս
Քրիստոս սցն նշանաւոր խօսքերն ա-
սելալ . “ Զաղքատս յամենայն ժամ
ընդ ձեղ ունիք ո յաւիտեան աւան-
դած , յանձնած էր այն թշուառներն ,
այն աղքատներն , որոնք Յիսուսի Քր-
իստոսի նմանութեան փառքն ունին ,
զոր չէր կարելի իրենցմէն բառնալ :
Աղքատն Յիսուս աղքատներն եւ
դժբախտներն ժառանգութիւն կտա-
կեց քրիստոնէից . եւ ոչ ապաքէն ա-
մեն ժամանակ եւ ամեն երկիրներու
մէջ Ճշմարիտ քրիստոնէից սիրտն միշտ
ապահով պատապարան եղած է դըմ-
բախտներու և աղքատներու :

Աւելի յառաջ երթանք և աւելի
սպազենք : Արդէն յարգել զՅիսուս
Քրիստոս յանձն աղքատաց , կը նշա-

նակէ ծառայել նմա ըստ արժանելոյն :
բայց պէտք է չխաբուիլ աղքատուց
բարիք աչնելու ժամանակ : Այս մա-
սին կ'ասեն թէ միայն մարդասիրու-
թիւնն բաւական չէ : Բարերարու-
թիւնն մի բաղադրեալ գործողութիւն
է , մի դժուարին արուեստ , որոյ ըս-
կըզբունքներն և քանի մի տաքերքն կա-
րող է աւելի լաւ իմանալ մի անկարե-
կից , բայց լուսաւորեալ մարդ , քան
թէ մի պարզապէս մարդասէր մարդ :
Բայց գիցուք թէ մարդասիրութեանն
փորձ , գիտութիւնն եւ հանճար պէտք
են , ինչ կը հետեւի սց սեղէն ՚ի վը-
նաս մարդասիրութեան : Միթէ մար-
դասիրութիւնն ինքնին գիտութիւն ,
փորձ և հանճար է : Միթէ բաւական
չէ , որ մարդասիրութիւնն արդէն մար-
դասիրութիւն է : Եւ երբ մարդասէրն
իւր բարերարելու շերմ եռանդին մէջ
օժանդակ ունի գիտութիւնն , փորձն
և հանճարն , սցն բնական օգնական-
ներն , միթէ դարձեալ զայն չգործէր ,
ինչ որ պարտ էր գործել : Միթէ շատ
չգործէր : Ի հարկ է աւելի կը գործէ-

Մարդասիրութիւնն սիրտն ըստ բանար
առանց միտքն բանալրու : Մարդասի
րութիւնն հոգին շահելու համար ա-
ւելի ուշադիր կը լինի և գեղեցիկ գիւ-
տեր կը գտնէ : Նիւթական և բարյա-
կան կարօտութիւններն խորին ուշա-
դրութեան կ'առնու , իրար հետ կը
միացնէ իւր մատածութեան մէջ , եւ
սյնակէս կը արամադրէ , որ նիւթական
կարօտութիւններն լցուցանելով՝ ըս-
դասէ բարյականին , այլ երիւոն
եւս միասն բաւականացնէ : Մարդա-
սիրութիւնն ունի իւր յատուկ ար-
ուեստն , իւր յատուկ հանճարն , ո-
րով շատ անգամ կը զարմացնէ և կը
գերազանցէ ամենէն յաջողակ և ամե-
նէն հնարագէտ ճարտարներն : Մար-
դասիրութիւնն ինքնին թերեւս աւե-
լի բան գտած է քան թէ գիտութիւնն,
աւելի բան գուշակած է քան թէ հան-
ճարն : Խնչակէս ամեն խորին զգացում-
ներ , նյոնակէս եւ մարդասիրութիւնն
կը բեղմնաւորէ մարդոյ իմացականու-
թիւնն : Մարդասիրութիւնն չուսու-
ցանէր ամեն բան , բայց քանի քանի

բաներ կան , զորս անհնարինն է ուսա-
նիլ առանց մարդասիրութեան :

Ինչ որ խօսինք , ինչ եղանակաւ
որ բացատրենք , եղբարք , այս յօյտնի
է , որ սէրն է ձշմարիտ բարին , միայ-
նակ բացարձակ բարին , միայնակ յա-
ւիտենական բարին : Այնպէս՝ որ ե-
թէ մարդասիրութեամբ իսկ ցանկամք
մեք , որ բարեգործութիւնն անելու
արուեստն կատարելագործուի և միշտ
աւելի յառաջէ , պէտք է փափագինք
յաւէտ , որ սէրն կատարելագործուի ,
զօրանայ և պահպանուի : Եթէ առանց
սիրոյ տեսնէնք , որ աղքատաց և տա-
ռապելոց վիշտերն կը սփոփին և վիճաւ
կըն կը բարւորի , գարձեալ պարտաւոր
էնիք գոհանալ զԱստուծոյ , որ միշտ
կը գթայ մարդկային ցեղին վերայ և
միշտ անուշահոտ բալասան կը հեղու
վերքերու վերայ , որով վիրաւորեցաւ-
մեզ համար : Բայց ամենէն աւելի սիշ-
տի գոհանանք , ամենէն առաջ սիտի
խնդրենք , որ բազմացնէ նա երկրիտ
վերայ ամեն մարդոյ սրտի մէջ այն
փրկարար մարդասիրութիւնն , որ է-

ովկիզըն և հիմն կենաց երջանկութեան, որ է ծշմարտութիւնն և գեղեցիութիւնն մարդկայինն է ութիւն։ Վասն զի Բնչ բանի կը ծառայէին սփոփանքն և նաև ամեն թշուառութեանց բարձումն , եթէ ամենէն մեծ թշուառութիւնն ըլ ջըն-ջուէր, եթէ արջափ ճոխութեանց մէջ տակաւին աղքատ մնար մարդոյ սփրոն և միշտ չքաւոր ՚ի սիրոյ :


Այս, լաւ հասկացէք Աստուծոյ նախախնամութիւնն : Դուք կը կարծէք թէ Նա ստեղծած է զմարդասիրութիւնն յօդուա աղքատաց , բայց ի-մացէք, որ Նա ստեղծած է մանաւանդ զաղքատութիւնն յօդուա մորդասիրութեան : Միթէ կարող չ'ը Նախախնամութիւնն այնպէս անել, որ բնաւ աղքատներ չը գտնուէին , բայց Նա խախնամութիւնն այսպէս չը կամեցաւ և այսպէս չը խոստացաւ . այլընդհակառակն խոստացաւ Նա , որ աղքատներն միշտ մեզ հետ ունենալը : Նա խոստացաւ զայն՝ հարուստներուն , խոստացաւ աղքատներուն : Վասն զի չը կայ այնորիս աղքատ , որ իւր ձաւ

նասպարհին մէջ չը կարողանայ օգնել մի ուրիշ աղքատի : Կան աղքատներ սցն բառի սովորական նշանակութեամբ . կան աղքատներ ուրիշ եղանակաւ . կան թշուառներ մարմով և մոքով , որոց ամենէն կարօնն և չքաւորն իսկ կարող է գարձեալ բան մի տալ , եթէ ինքն քրիստոնեայ է : Վասն զի այս իմաստով ամենայն միսիթարութեամբ կարող ենք ասել , որ մարդիկ ներէն ամենէն աղքատն գարձեալ այնշափ հարուստ է , որ կարող է փոխտալ Յաւիտենականին : Կան աղքատներ , կան թշուառներ , ոչ թէ միայն այն պատճառաւ , որ մեղքն զմեզ թշուառայուցած է և աղքատացուցած , այլ կան նաև աղքատներ , որպէս զի մարդասիրութիւնն միջացներ ունենայ զարգանալու , որպէս զի չը քննանայ , չը ներհէ անկործ : Այս տեղ է ահա Աստուծոյ նախախնամութիւնն , որ կամեցած է չարիքէն բարիք ծնուցանել : Ուրախանանք ուրեմն , որ մարդասիրութիւնն աւելի և աւելի դառնար խոհեմ եւ ոնտեսագիտական :

Պէտք է այսպէս լինիլ: Ուրախանանկնք, որ Մարիամ վաճառել իւր իւղն և և բերհարիւր գենար ստանայ: Բայց ուրախանանմք յաւէտ այն գդացման համար, որ զՄարիամ կը մերձեցնէ յուս Յիսուսի Քրիստոսի և յոստ աղքատաց: Ուրախանանք, որ կը սիրէ Մարիամ: Վասն զի առանց սիրոյ եթէ բոլոր Ճռ խութիւնք վասնես աղքատաց՝ ոչ ինչ է: Հայցենք և խնդրենք, որ քրիստոնէտին մարդասիրութեան սկզբ ըստնքն, յորմէ կը ծնանին բաղմաթիւ բարեգործական հաստատութիւնք, որ աւուր զօրանայ և հաստատուի Եղեղեցւոյ և աշխարհի մէջ: Ազաքենք և աղօթենք, որպէս զի ջրաժիպութիւնք և չը դատապարտուինք օր մի տեսնել, որ կենաց շունչն հեռանալով այն մանրակրկիտ և հաշուագէտ մարդասիրութեան դրութենէն, միայն նախնի մարդասիրութեան ձեւն ու կեղեւն մնայ աշխարհի վերայ: Ազօթենք, որպէս զի ճշմարիտ սէրն, աստուածահաճոյ սէրն, օր աւուր աւելի սկնեորէ, աւելի կենդանացնէ այն գործերն, որոց

վերայ կը զարմանանք: Ազօթենք մանաւանդ, որ Յիսուս Քրիստոս աւելի ճանաչուի, նորա սէրն աւելի զգացուի, նորա գործն ըլովին ընդունուի և հասկացուի: Վասն զի սորա մէջ կը կայանայ սրտերու վերակենդանութիւնն եւ աշխարհի վերանորոգութիւնն:

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
660
661
662
663
664
665
666
667
668
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
730
731
732
733
734
735
736
737
738
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
740
741
742
743
744
745
746
747
748
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
810
811
812
813
814
815
816
817
818
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
820
821
822
823
824
825
826
827
828
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
830
831
832
833
834
835
836
837
838
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
840
841
842
843
844
845
846
847
848
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
880
881
882
883
884
885
886
887
888
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
910
911
912
913
914
915
916
917
918
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
920
921
922
923
924
925
926
927
928
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
930
931
932
933
934
935
936
937
938
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
940
941
942
943
944
945
946
947
948
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
980
981
982
983
984
985
986
987
988
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
1000



1808

ՀՀ Ազգային գրադարան



NL0331425

ՀՀ Ազգային գրադարան



NL0331423

ՀՀ Ազգային գրադարան



NL0331428

ՀՀ Ազգային գրադարան



NL0331427

ՀՀ Ազգային գրադարան



NL0331426

ՀՀ Ազգային գրադարան



NL0331422

ՀՀ Ազգային գրադարան



NL0331421

ՀՀ Ազգային գրադարան



NL0331420

